Վարդագոյն պայծառ,
Նմին նմանակ
1842 Փետր. 19».

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ.— Մբ. 1365ին կը նստատակուի Գազայի մէջ, (ժպկ. Ա. Հատ. էջ 210)։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ.— Նբ. Ակնայ. այս առթիւ կը թղթակցի Եէնէգթցի Դաւիթ կթղի. հետ, (1801-4). և եպս. կը ձեռնադրուի 1801ին. (Դիւան, Գիրք Ե. էջ 108)։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՆՈՐԱՎԱՆՔՑԻ (Սիւնիք, Վայոց Ձոր գաւառ).— Մբ. 1850ին։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Ծ. Սամաթիա. աշկ. Պետրոս եպսի. եւ քարտուղար վանեցի Թէոդորոս պտրքի. իր կրկասիրութիւններն են, Պարսկ Ծաղիկաց խորագրով ձեռագիր մը, Երեւոյթ Կրից անուամբ ճառ մը (տպ. Ս. Յակոբ 1851) և թարգմանութիւն մը Սիրուն Զբօսարան (տպ. Ս. Յակոբ 1875).

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ՊՕՅԱՃԵԱՆ, ԲԱՂԻՇԵՑԻ.—Մբ. Ծ. 1875 ին. Զռ. 1881ին, ՏԴ. (1886-88). ՏԲ. (1888-1891). ՏՅՊ. (1891-97). Ժամօրհնող (1898-1908) ՏՀ. (1908-1911). անդամ Տն. Ժողովի և Փ. Տեղապահի (1911-1912). կը վախճանի 1919ին, Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու տուն մը Յոպպէի մէջ։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՋՈՒՂԱՅԵՑԻ.—Մբ. Զռ. 1817ին Նբ. Հընդկաց 1818ին. իր այս պաշտօնը կը հաստատուի Ս. Յակոբի Տաճարին աւագ խորանի վարագուրի մը սա յիշատակարանովը. «Նըկարեցաւ վարագոյրս ի Մատրաս արդեամբք բարեպաշտ Պրն. Մովսէս Յարութիւնեանի ի յիշատակ հանգուցեալ ծնողաց իւրոց զոր ընծայեաց սրբոյ տաճարիս Սրբոց Յակոբեանց ձեռամբ Սրբազան Գրիգոր վարդապետի Զուղայեցւոյ, Հնդկաց Նուիրակի սրբոյ քաղաքին Երուսաղէմի յամի տեառն 1818»։ 1812ին Անտոն աբ. Տփխիսեցի՝ սոյն վարդապետէն կ'ստանայ Պետրոս արքեպս. Աղամալեանի Մեկն. Առակաց Ս. Աւետարանի գիրքն եւ կ'ընդօրինակէ զայն։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՍԱՍՈՒՆՑԻ, (Նիչ գիւղէն).— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ 1636ին, կը նուիրէ իր մագաղաթ ձեռ. Աստեղի ժամագիրքը (ՄՁ. թ. 377)։ Այս ձեռագիրը մտ. Կու-